ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/132

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2025 թ. N 132

«ԿԱՊԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 37 ա**

Նախորդ հավատարմագրման մասին

որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մայիսի 07-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԿՊԲՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 02 փետրվարի 2024թ.

վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 22 մայիսի 2024թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 28-30-ը հոկտեմբերի 2024թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 17 մարտի 2025թ.

թերությունների վերացման նախնական

ծրագրի ներկայացում՝ 25 մարտի 2025թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Ասյա Սիմոնյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
- **Լուսինե Մանուչարյան՝** Երևանի հենակետային բժշկական քոլեջի մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ,
- **Ռուզաննա Խուրշուդյան՝** Շիրակի պետական համալսարանի և Գյումրու պետական բժշկական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
- **Ալլա Նիկողոսյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողուհի, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԿՊԲՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. ***Քոլեջն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ՄՈՒՀ-ում գործող կրթական ծրագրերի արդիականացման և գործնական բաղադրիչի ընդգծման ուղղությամբ կատարված քայլերը նպաստել են ծրագրերի համապատասխանեցմանը աշխատաշուկայի պահանջներին: Պրոֆեսորադասախոսական կազմը և առկա նյութատեխնիկական պայմանները հիմնականում ապահովում են գործնական հմտություններով

և ՈԱՇ-ի պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը: Շրջանավարտների մասնագիտական որակների առավել բարձրացման նպատակով նպատակահարմար է շարունակականորեն զարգացնել դասախոսների մասնագիտական և մանկավարժական կարողությունները՝ ապահովելով վերապատրաստումների պարբերականություն: Ինչպես նաև հարստացնել նյութատեխնիկական բազան՝ հատկապես գործնական ուսուցման արդյունավետ կազմակերպման տեսանկյունից: Խորհուրդ է տրվում նախաձեռնել համեմատական վերլուծություններ (բենչմարքինգ)՝ առաջատար փորձի ուսումնասիրության և կիրառման միջոցով կրթական ծրագրերի շարունակական բարելավումն ապահովելու համար:

II. *Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը*

Քոլեջում որոշ ուղղություններով իրականացվում է ռազմավարական ծրագրով նախատեսված քայլերի կիրառում: Տվյալների հավաքագրման հիմնական մեխանիզմներն են հաշվետվությունները և հարցումները: Կառավարման համակարգը սկսել է կարևորել որակի ապահովման համակարգը և դրա զարգացումը: Խորհուրդ է տրվում ապահովել գնահատման առանցքային ցուցանիշների վրա հիմնված ռազմավարական կառավարում՝ սահմանելով ռազմավարական նպատակների և գործողությունների հստակ փոխկապակցվածություն: Նպատակահարմար է զարգացնել և համակարգել տվյալահենք կառավարման մեխանիզմները՝ ապահովելով դրանց կիրառելիությունը պլանավորման, մշտադիտարկման և որոշումների կայացման ամբողջ ցիկլում: Խորհուրդ է տրվում ռազմավարական ծրագրերում հստակ արտահայտել որակի ապահովման համակարգի զարգացումը և որակի մշակույթի ձևավորումը՝ որպես կայուն զարգացման առաջնահերթություն:

III. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*

Քոլեջում կատարվել են որոշակի քայլեր հետազոտական բաղադրիչի զարգացման ուղղությամբ: Ուսումնական գործընթացում ներառվում են ուսանողների վերլուծական և քննադատական մտածողության ձևավորմանն ուղղված առաջադրանքներ, իսկ որոշ կրթական ծրագրերում իրականացվել են փոքրածավալ կիրառական հետազոտական աշխատանքներ: Խորհուրդ է տրվում վերանայել և ամբողջացնել հետազոտական քաղաքականությունը, կանոնակարգերը և գնահատման մեխանիզմները: Նպատակահարմար է խթանել դասախոսների կողմից մասնագիտական և մեթոդական ձեռնարկների, ուղեցույցների մշակումը, ինչպես նաև ապահովել միջազգային փորձի ուսումնասիրման և կիրառման հնարավորությունները:

Քոլեջը համագործակցում է մի շարք տեղական և միջազգային գործընկերների հետ: Խորհուրդ է տրվում մշակել գործողությունների պլան՝ նպատակների, համագործակցության ձևերի և ակնկալվող արդյունքների սահմանմամբ:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **««Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտը մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Քոլեջի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ Վ. Գաբրիելյան

2025 թ., մայիսի 07